ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾԿՀ-22/8-ՄԱԾՁԲ

ք.Երևան «04» Մարտի 2022 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում միչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ք. Երևան, Սարյան 22 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011183010 ՀՎՀՀ 02531594 Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ ՀՀ, ք. Երևան, Ն.Նորքի թաղ., Գալշոյան փ.19-12 Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ. Հ/Հ 2050032155921001 «Ինեկոբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 82934656 ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«04» Նոյեմբեր 2022թ. կնքված
ՀԾԿՀ-22/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը 2022թ
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/: Սարքավորման տեղափոխումը վերանորոգման և ետ վերադարձը իրականացնում է սպասարկողը:	դրամ	400000	1	ք. Երևան, Սարյան 22	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 18-րդ ենթակետով սահմանված լիազորված մարմնի կողմից գործարքի հաշվառման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի

ՑՈՒՑԱԿ

	Ծառայության անվանումը	Գինը
	Xerox WC 3045 բազմաֆունկցիոնալ սարքի	
1.	Դիագնոստիկա	896
2.	Պրոֆիլակտիկա	3135
3.	Մեխանիկայի նորոգում	3493
4.	Վառարանի նորոգում	3971
5.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4031
6.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5912
7.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	7882
8.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	8868
9.	Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը	14780
10.	Մայրական տպասալի փոխարինում	9853
11.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6001
12.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	2777
	HP LJ 6p մոդելի լազերային տպիչի	
13.	Դիագնոստիկա	896
14.	Պրոֆիլակտիկա	2956
15.	Մեխանիկայի նորոգում	2418
16.	Վառարանի նորոգում	2866
17.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4479
18.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6897

19.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2463
20.	Մայրական տպասալի փոխարինում	5912
21.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	4927
22.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	2777
	HP LJ 1320 մոդելի լազերային տպիչի	
23.	Դիագնոստիկա	1045
24.	Պրոֆիլակտիկա	2956
25.	Մեխանիկայի նորոգում	3941
26.	Վառարանի նորոգում	4927
27.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4434
28.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6404
29.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3449
30.	Մայրական տպասալի փոխարինում նորով	9853
31.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6569
32.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP LJ 2200 մոդելի լազերային տպիչի	
33.	Դիագնոստիկա	896
34.	Պրոֆիլակտիկա	1971
35.	Մեխանիկայի նորոգում	2956
36.	Վառարանի նորոգում	2956
37.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6569
38.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7882
39.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2463
40.	Մայրական տպասալի փոխարինում նորով	11824
41.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6404
42.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP LJ 2015 մոդելի լազերային տպիչի	
43.	Դիագնոստիկա	1045
44.	Պրոֆիլակտիկա	2956
45.	Մեխանիկայի նորոգում	4927
46.	Վառարանի նորոգում	3941
47.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4434
48.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6404
49.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2956

50.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP LJ 2055D մոդելի լազերային տպիչի	
51.	Դիագնոստիկա	1045
52.	Պրոֆիլակտիկա	2956
53.	Մեխանիկայի նորոգում	4927
54.	Վառարանի նորոգում	3941
55.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4434
56.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6404
57.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2956
58.	Մայրական տպասալի փոխարինում նորով	9853
59.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6509
60.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP LJ 3005n մոդելի լազերային տպիչի	
61.	Դիագնոստիկա	1045
62.	Պրոֆիլակտիկա	3941
63.	Մեխանիկայի նորոգում	5912
64.	Վառարանի նորոգում	3941
65.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6897
66.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7882
67.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3449
68.	Մայրական տպասալի փոխարինում նորով	9853
69.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	5912
70.	Ցանցային քարտի փոխարինում նորով	3135
71.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP Color LJ 2550 մոդելի լազերային տպիչի	
72.	Դիագնոստիկա	2239
73.	Պրոֆիլակտիկա	7017
74.	Մեխանիկայի նորոգում	4927
75.	Վառարանի նորոգում	3941
76.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	9853
77.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	10838
78.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3449
79.	Մայրական տպասալի փոխարինում նորով	11824
80.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6897
81.	Լազերի փոխարինում նորով	10838
	Canon A3 IX6800 մոդելի գունավոր տպիչի	
82.	Դիագնոստիկա	2239
83.	Պրոֆիլակտիկա	4927
84.	Մեխանիկայի նորոգում	2956
85.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2956
86.	Տպող գլխիկի փոխարինում նորով	39412
87.	Մայրական տպասալի փոխարինում նորով	17318
	Canon i-SENSYS LBP7018C գունավոր լազերային տպիչի	
88.	Դիագնոստիկա	2836

89.	Պրոֆիլակտիկա	8957
90.	Մեխանիկայի նորոգում	5972
91.	Վառարանի նորոգում	4927
92.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	10346
93.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	10838
94.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3941
95.	Մայրական տպասալի փոխարինում նորով	11824
96.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9853
97.	Լազերի փոխարինում նորով	13137
	LexMark MX410de բազմաֆունկցիոնալ սարքի	
98.	Դիագնոստիկա	2986
99.	Պրոֆիլակտիկա	4927
100.	Մեխանիկայի նորոգում	5912
101.	Վառարանի նորոգում	6897
102.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	10838
103.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	11824
104.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3449
105.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	14780
106.	Մայրական տպասալի փոխարինում նորով	15765
107.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	11824
108.	ADF-ի փոխարինում նորով	19706
109.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	10749
	HP M1536dnf MFP բազմաֆունկցիոնալ սարքի	
110.	Դիագնոստիկա	2239
111.	Պրոֆիլակտիկա	4031
112.	Մեխանիկայի նորոգում	4927
113.	Վառարանի նորոգում	4927
114.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5912
115.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6897
116.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3732
117.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	7882
118.	Մայրական տպասալի փոխարինում նորով	14780
119.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9853
120.	ADF-ի փոխարինում նորով	19706
121.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3434
	Kyocera Mita KM 4050 պատճենահանող սարքի	
122.	Դիագնոստիկա	6270
123.	Պրոֆիլակտիկա	12839
124.	Մեխանիկայի նորոգում	6091
125.	Վառարանի նորոգում	8360
126.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	23438
127.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	34486
128.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	6569
129.	Մայրական տպասալի փոխարինում նորով	24633
130.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	19706
131.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	8957
132.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 4050 drum unit)	142720

	Kyocera KM-2030 պատճենահանող սարքի	
133.	Դիագնոստիկա	2956
134.	Պրոֆիլակտիկա	7882
135.	Մեխանիկայի նորոգում	5912
136.	Վառարանի նորոգում	10480
137.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	22662
138.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	31649
139.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	8868
140.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	8868
141.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 2030 drum unit)	133166
	Canon iR 2016j պատճենահանող սարքի	
142.	Դիագնոստիկա	3882
143.	Պրոֆիլակտիկա	7763
144.	Մեխանիկայի նորոգում	5972
145.	Վառարանի նորոգում	6569
146.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	12092
147.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	13735
148.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5225
149.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	4120
150.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Canon iR2016 drum unit)	83303
	Canon image FORMULA DR-4010C սարքի	
151.	Դիագնոստիկա	1478
152.	Պրոֆիլակտիկա	3941
153.	Մեխանիկայի նորոգում	4927
154.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3941
155.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	6897
	Canon image FORMULA DR-C225II	
156.	Դիագնոստիկա	1478
157.	Պրոֆիլակտիկա	3941
158.	Մեխանիկայի նորոգում	4927
159.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3941
160.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	6897
	Panasonic FAX սարքի	
161.	Դիագնոստիկա	493
162.	Պրոֆիլակտիկա	1971
163.	Մեխանիկայի նորոգում	6404
164.	Սնուցման բլոկի նորոգում	2956
	Epson GT 2500 սկաներ	
165.	Դիագնոստիկա	1478
166.	Պրոֆիլակտիկա	3941
167.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	8868
	HP G2710 սկաներ	
168.	Դիագնոստիկա	1478
169.	Պրոֆիլակտիկա	3941
170.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	8868
	HP LJ 1200 մոդելի լազերային տպիչի	
171.	Դիագնոստիկա	4927
172.	Պրոֆիլակտիկա	1582
173.	Մեխանիկայի նորոգում	2956
174.	Վառարանի նորոգում	2956
175.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4927
176.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5912
177.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	1971
178.	Մայրական տպասալի փոխարինում նորով	5912
179.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	4434

180.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3135
	HP LJ Pro MFP M227sdn բազմաֆունկցիոնալ սարքի	
181.	Դիագնոստիկա	1941
182.	Պրոֆիլակտիկա	4479
183.	Մեխանիկայի նորոգում	4927
184.	Վառարանի նորոգում	7882
185.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5912
186.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7390
187.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3449
188.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	15371
189.	Մայրական տպասալի փոխարինում նորով	15765
190.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9853
191.	ADF-ի փոխարինում նորով	14780
192.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3464
	Canon MF 237W բազմաֆունկցիոնալ սարքի	
193.	Դիագնոստիկա	1493
194.	Պրոֆիլակտիկա	4449
195.	Մեխանիկայի նորոգում	4927
196.	Վառարանի նորոգում	7882
197.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5912
198.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7405
199.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3449
200.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	15323
201.	Մայրական տպասալի փոխարինում նորով	15765
202.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9853
203.	ADF-ի փոխարինում նորով	14780
204.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3374
	HP LJ PRO M15A լազերային տպիչի	
205.	Դիագնոստիկա	1582
206.	Պրոֆիլակտիկա	3941
207.	Մեխանիկայի նորոգում	4449
208.	Վառարանի նորոգում	4927
209.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5912
210.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7882
211.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3449
212.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3434

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Ն.Նորքի թաղ.,
Գալշոյան փ.19-12
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ.
Հ/Հ 2050032155921001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 82934656

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«04» Նոյեմբերի 2022թ. կնքված
ՀԾԿՀ-22/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	0	40000	40000	140000	140000	140000	240000	240000	240000	400000	400000	400000	400000
Ընդամենը			0	40000	40000	140000	140000	140000	240000	240000	240000	400000	400000	400000	400000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
/ Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Ն.Նորքի թաղ.,
Գալշոյան փ.19-12
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1տ.
Հ/Հ 2050032155921001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 82934656

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«04» Տարի 2022թ. կնքված
ՀԾԿՀ-22/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«04» մարտի 2022թ. կնքված
ՀԾԿՀ-22/8-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն